ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐՏԱՇԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

«22» հունիսի 2011թ.

Թիվ 57

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացվում է Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի 2011թ. մայիս ամսվա կայացված որոշումների օրինակները: Կարգադրություններ չեն եղել:

Համայնքի ղեկավար՝ Մ. Օհանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ...
Մուտք թիվ 6272-11
22 06 2011

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐՏԱՇԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 7

«_02_»_մայիսի_ 2011թ. գ.Արտաշար

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009թ.-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 թ-ի ԱՊՐԻԼԻ 2-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3 –րդ կետով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Բ» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 2010թ- ի մարտի 22-ի թիվ 01/07.2/298-10 և 2011թ-ի ապրիլի 15-ի թիվ 01/07/1162-11 գրությունները

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի 2009թ-ի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտաշարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 3 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1Որոշման N1 և N2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010թ-ի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտաշարի գյուղական համայնքի ղեկավարի 2009թ-ի փետրվարի 18-ի թիվ 3 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 7 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ.Օհանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐՏԱՇԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՈՐՈՇՈՒՄ N -8

13. 05. 2011թ. գ.Արտաշար

## ԱՐՏՅՈՄ ՀՐԱՆՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաքերյալ օրենսգրքի 191-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզային վարչության Մեծամորի ոստիկանության բաժնի 2011թվականի ապրիլի 15-ի N87-3/2-948գրությանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Չենքի պահելու կանոնները խախտելու համար, Արտաշար համայնքի բնակիչ՝ Արտյոմ Հրանտի Մկրտչյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի քսան տոկոսի չափով, երկու հարյուր դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արտաշար համայնքի ղեկավար՝ Մ.Օհանյան

13.05.2011թ.
Գյուղ Արտաշար

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐՏԱՇԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՈՐՈՇՈՒՄ N -9

13. 05. 2011թ. գ.Արտաշար

## ՔԱՋԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 192-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզային վարչության Մեծամորի ոստիկանության բաժնի 2011թվականի ապրիլի 13-ի N87-3/2-928գրությանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ձեռքի զրանցման կանոնները խախտելու համար, Արտաշար համայնքի բնակիչ՝ Քաջիկ Սերյոժայի Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ տոկոսի չափով, հիսուն դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արտաշար համայնքի ղեկավար՝ Մ.Օհանյան

13.05.2011թ.
Գյուղ Արտաշար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

26 .ՄԱՅԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ N-10

## ԽՆԱՄԱԿԱԼ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ և 34-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N-922-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արտաշար գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը.*

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արտաշար գյուղական համայնքի անչափահասներ Վլադիսլավ Թամազի Սաֆոյանի(ծնված 17 հունիսի 1999թ.) և Աննա Թամազի Սաֆոյանի(ծնված 5 ապրիլի 2002թ.) նկատմամբ սահմանել խնամակալ հայրական տատիկին Գյազո Կադրի Սադխյանին:

2.Սույն որոշման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Ֆելիքս Հակոբյանին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արտաշար համայնքի ղեկավար՝ Մ.Օհանյան

26.ՄԱՅԻՍԻ.2011ԹՎԱԿԱՆ
ԳՅՈՒՂ ԱՐՏԱՇԱՐ